ՎՐԱՍՏԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀԻ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հուշաթերթի հրահանգ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2013 ԹՎԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2013

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները

1.Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի հետ կապված լիազորություններ.

- Հրավիրում եք հանձնաժողովի նիստ *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 8.2),*
- Ղեկավարում եք տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 27.1.բ),*

2. Վարչական գործառույթներ.

- Իրավունք ունեք առաջադրանք տալ տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին և հանձնաժողովի այլ անդամներին *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 27.1.ե),*
- Իրավունք ունեք արձակել կարգադրություն *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 30.1.գ),*
- Ընդունում և ձեր մակագրությամբ բաշխում եք տեղամասային ընտրական հանձնաժողով մտած ընտրական փաստաթղթերը և տեղամասային ընտրական հանձնաժողովի անունով մտած թղթակցությունները *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 27.1.գ),*
- Պատասխանատու եք տարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթերի, գույքի և այլ նյութերի ստացման, պահպանման և ըստ նշանակության փոխանցման համար *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 27.1.դ, Հոդված 63.6),*
- Հրապարակայնության ապահովման նպատակով ի նկատի ունեցեք, որ ընտրական տեղամասում աչքի ընկնող տեղում փակցված պետք է լինեն *(տեղամասային ընտրական հանձնաժողովի ռեգլամենտ-Հոդված 8).*
  - Հանձնաժողովի կապի հեռախոսի (ֆաքսի) համարները և այլ ռեկվիզիտները,
  - Ընտրական վարչության այն իրավական ակտերը, որոնք վերաբերում են տեղամաս-

ային ընտրական հանձնաժողովի գործունեությանը,

- Հանձնաժողովի և հանձնաժողովի նախագահի կարգադրությունները,
- Ընտրացուցակները, ընտրացուցակներում փոփոխությունների մտցնումը և անճշտությունները բողոքարկելու կարգը և ժամկետները:

Ուշադրություն!

- Մինչև քվեարկության օրը, երկրորդ օրից ոչ ուշ կփոխանցվեն ճշգրտված ցուցակների վերջնական տարբերակները (ընտրական հանձնաժողովին հատկացված տարբերակը՝ սեղանի ցուցակը և հանրային տեղեկատ-վությանը հատկացված տարբերակը՝ պատի ցուցակ) *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 31.11)*
- Հրապարակային տեղեկատվությանը հատկացված պատի ցուցակի նախնական տարբերակը պետք է հանեք և նույն տեղում փակցնեք ճշգրտված տարբերակը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության նախորդ օրը (26 հոկտեմբերի)

1. Քվեարկության շենքի սարքավորման հետ կապված լիազորություններ.

- Պատասխանատվություն եք ստանձնում քվեարկության շենքի սարքավորման համար: Ի նկատի ունեցեք *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 58.4).*
  - Քվեարկության շենքում պետք է սարքավորվեն գաղտնի քվեարկության քվեախցի-կներ (յուրաքանչյուր 500 ընտրողի համար նախատեսված պետք է լինի առնվազն մեկ քվեախցիկ): Ամեն քվեախցիկում պետք է լինի մեկ գրիչ,
  - Պետք է հատկացվեն տեղեր ընտրողների գրանցման համար և տեղադրվեն սեղաններ գրանցողների թվաքանակին համապատասխան,
  - Աչքի ընկնող տեղում պետք է դրված լինի թափանցիկ քվեատուփը,
  - Քվեատուփին մոտ պետք է տեղադրվի սեղան հատուկ ծրարների համար:

- Քվեարկության շենքում աչքի ընկնող տեղում փակցված պետք է լինեն *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 58.4.ջ; 58.5).*
  - Ընտրացուցակները,
  - Ընտրական սուբյեկտների ցուցակը (թեկնածուների ցուցակները),
  - Ձայն տալու հրահանգը և ԿԸՀ-ի կողմից սահմանված քվեաթերթիկների լրացման կարգը(ինչպես նաև պետք փակցվի գաղտնի քվեարկության խցիկում),
  - Քաղվածք օրենքից, թե որ դեպքում է քվեաթերթիկը անվավեր,
  - Քվեարկության արդյունքների ցուցադրա-կան արձանագրությունը:

2. Ընտրական փաստաթղթերի ընդունման հետ կապված լիազորություններ.

Հիշեք, մինչև քվեարկության սկսվելը, ժամը 12-ից ոչ ուշ, տարածքային ընտրական հանձնաժողովից պետք է ստանաք ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները: Ստանալիս **անպայման հաշվեք** և համեմատեք փոխանցված ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների թվաքանակությունը ընդունմանհանձնման ակտում մտցված տվյալների հետ (*Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 63.9-11):* Ստուգեք, որ քվեաթերթիկների վրա նշված լինի ձեր ընտրական տեղամասի և ընտրատարածքի համարը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները
Քվեարկության օրը
(27 հոկտեմբերի)

07:00-08:00 ժամ

- ☐ 07:00 ժամ - Բացեք ընտրական տեղամասը, հեռախոսով տեղեկացրեք տարածքային ընտրական հանձնաժողովին ընտրական տեղամասի բացման և հանձնաժողովի անդամների քվորումի վերաբերյալ (7 անդամ) *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.1)*

- ☐ Փոխանցեք քարտուղարին քվեարկության օրվա Գրառումների գիրքը, Գրանցամատյանը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը և ցուցադրական արձանագրությունը (փակցվում են աչքի ընկնող տեղում)

- ☐ Ստուգեք քվեարկության շենքում գտնվող իրավասու անձանց լիազորագրության վկայականները

- ☐ Ի ցույց բոլորի ստուգեք այն ծրարի ամբողջականությունը, որտեղ տեղադրված է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը և բացեք այն և կատարեք առաջին հատվածախուցը: Հատվածախուցով կնիքների նմուշը պետք է արտացոլվի Գրառումների գրքում *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.2.բ)*

- ☐ Անցկացրեք վիճակահանություն շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամին պարզելու համար, որին մասնակցում են միայն կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.2.դ)*

- ☐ Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների շրջանում անցկացրեք վիճակահանություն մնացած գործառույթները (ընտրո-

ղների հոսքը կարգավորող, ընտրողներին գրանցողներ, քվեատուփը և հատուկ ծրարները հսկող հանձնաժողովի անդամ) բաշխելու նպատակով *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.2.է)*

☐ Բողոքների գրանցման գործընթացը վերահսկելու նպատակով անցկացրեք վիճակահանություն ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից 2 ներկայացուցչից ոչ ավելին բացահայտելու համար: Հիշեցեք, վիճակահանությամբ բացահայտված ներկայացուցիչները և հանձնաժողովի քարտուղարը չի կարելի լինել միևնույն կուսակցության կողմից ներկայացված անձ *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.5)*

☐ Հայտարարեք ընտրողների թվաքանակությունը համընդհանուր ընտրացուցակում, հատուկ ցուցակում, ինչպես նաև շրջիկ քվեատուփի ցուցակում *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.6.ա)*

☐ Հայտարարեք ստացած ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների քանակությունը *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.6.բ)*

☐ Ստուգեք, որ քվեատուփերը լինեն դատարկ և դրոշմակնքեք հիմնական և շրջիկ քվեատուփերը անհատական համար ունեցող դրոշմակնիքով *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.6.գ)*

☐ Յուրաքանչյուր գրանցողին փոխանցեք. 300-ընտրողի ցուցակ (ինչպես նաև հատուկ ցուցակը՝ գրանցողներից մեկին), քվեաթերթիկների մեկական բլոկնոտ, դրոշմավորման հեղուկ: Գրանցողների շրջանում վիճակահանությամբ բախշեք Գրանցողի կնիքները, կնիքի վրա արեք առաջին հատվածախուցը: Հատվածախուցի նմուշը արտացոլեք քվեարկության օրվա Գրա-

ռումների գրքում *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.7-8)*

☐ Հոսքը կարգավորողին փոխանցեք դրոշմավորման ստուգման ուլտրամանուշակագույն լապտերը

☐ Քվեատուփը և ծրարները հսկող հանձնաժողովի անդամին փոխանցեք հատուկ ծրարները և հիմնական քվեատուփը

☐ Հանձնաժողովի անդամներին նյութերը փոխանցելուց հետո անմիջապես, մինչև քվեարկության սկսվելը, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի հետ միասին լրացրեք (բացի առաջին ընտրողի տվյալներից) ստուգողական թերթերի ինքնապատճենման ձևը: Ուշադրություն դարձեք, որ հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրեն ստուգողական թերթը *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.10)*

08:00 ժամ

☐ Հեռախոսով հայտնեք տարածքային ընտրական հանձնաժողովին քվեարկությունը սկսելու վերաբերյալ:

08:00 ժամից

☐ Ընտրական տեղամաս առաջին ընտրողը ներկայանալիս՝ ընտրողն անցնում է գրանցում, ստանում է քվեաթերթիկ և դրանից հետո ցուցում տվեք հանձնաժողովի քարտուղարին առաջին ընտրողի տվյալները մտցնել ստուգողական թերթի մեջ: Ստորագրել տվեք նրան և նշել տվեք քվեատուփերի մեջ դրանք գցելու ճիշտ ժամանակը: Ստուգողական թերթի մեկ օրինակը տեղադրեք հիմնական քվեատուփի մեջ, երկրորդ օրինակը՝ շրջիկ քվեատուփի մեջ (այդպիսինի գոյության դեպքում), իսկ երրորդ ստուգողական թերթը պահեք *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 61.10)*

- ☐ Առաջին ընտրողի կողմից գրանցում անցնելուց հետո, հեռախոսով տեղեկացրեք տարածքային հանձնաժողովին քվեատուփ(եր)ը դրոշմակնքելու, ստուգողական թերթ(եր)ը տուփ(եր)ում գցելու, հանձնաժողովի հատուկ կնիքի և գրանցողների կնիքների վրա առաջին հատվածախուցը անելու և հատվածախուցի նմուշը քվեարկության օրվա Գրառումների գրքում արտացոլելու մասին:

09:00 ժամից

- ☐ 09:00 ժամից վիճակահանությամբ բացահայտված հանձնաժողովի 2 անդամին հանձնարարեք շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության անցկացում և փոխանցեք նրանց *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 66.3).*
  - ☐ Շրջիկ քվեատուփի ցուցակը
  - ☐ Ընտրողներին գրանցողի կողմից ստորագրությամբ և հատուկ կնիքով վավերացված անհրաժեշտ քանակության ընտրական քեաթերթիկներ
  - ☐ Հատուկ ծրարներ
  - ☐ Դրոշմակնքված շրջիկ քվեատուփը, որտեղ տեղադրված պետք է լինի ստուգողական թերթը

- ☐ **10:00 ժամ** Խնդրեք գրանցողներին առանց քվեարկության գործընթացը խանգարելու,
- ☐ **12:00 ժամ** հաշվեն ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իրենց
- ☐ **15:00 ժամ** կողմից տրված քվեաթերթիկների թվաքանակությունը (նախագահին
- ☐ **17:00 ժամ** փոխանցած խոտան քվեաթերթիկների հաշվառումով): Եթե տվյալների
- ☐ **19:00 ժամ** միջև բացահայտվի տարբերություն, Գրանցողը անհապաղ պետք է գրի բացատրագիր, որը պետք է կցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ րձանագրությանը:

12:00 և 17:00 ժամերին Գրանցողների հետ միասին ընտրացուցակներում հաշված ընտրողների ստորագրությունների թվաքանակությունը քարտուղարին հանձնարարեք մտցնել Գրառումների գրքում և Ցուցադրական արձանագրությունում և տեղեկացրեք Տարածքային ընտրական հանձնաժողովին *(Ընտրական օրենգիրք՝ Հոդված 65.6):*

Մինչև 20:00 ժամը

☐ Շրջիկ քվեատուփը տեղամաս պետք է վերադարձվի ժամը 20 –ից ոչ ուշ *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 66.1)*

20:00 ժամից մինչև քվեատուփի բացումը

☐ 20:00 ժամին քվեարկությունը հայտարարեք ավարտված: Հանձնարարեք հանձնաժողովի անդամներից մեկին հաշվել հերթում կանգնած ընտրողների թվաքանակը: Քվեարկության ավարտից հետո փակեք ընտրական տեղամասի դուռը և դրոշմակնքեք քվեատուփի ճեղքը *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 65.8)*

☐ Քվեարկության ավարտից հետո մոտեցեք յուրաքանչյուր գրանցողին, հանձնարարեք (մինչև քվեարկության ավարտը իրենց կողմից գրված բացատրագրերում (այդպիսինի գոյության դեպքում) (նշված տվյալների հաշվառումով) հաշվեն.

Եթե հավասարություն չի կազմվում, հանձնարարեք գրանցողին նորից վերահաշվել և ճշգրտել թվաքանակը: Եթե հավասարություն կրկին չի կազմվում, խնդրեք գրանցողին գրել բացատրագիր, որը պետք է կցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը:

- ☐ Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ հանձնաժողովի և ընտրողներին գրանցողի կնիքներին կատարեք երկրորդ հատվածախուցը: Հատվածախուցով կնիքների նմուշը պետք է արտացոլվի Գրառումների գրքում *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 67.1):*

- ☐ Անցկացրեք վիճակահանություն 3 (կամ անհրաժեշտության դեպքում ավելի) հաշվողին բացահայտելու համար: Եթե դիտորդներն իրենց կազմից փոխհամաձայնությամբ չեն կարողանա ընտրել հաշվելու գործընթացը դիտարկող անձանց, դիտորդների շրջանում անցկացրեք վիճակահանություն 2 դիտորդի բացահայտելու համար *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 67.1)*

- ☐ Անցկացրեք վիճակահանություն ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից 2 ներկայացուցչից ոչ ավելի բացահայտելու համար, ովքեր հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ բացահայտված հաշվողների հետ միասին մասնակցում են իսկական կամ/և անվավեր ընտրական քվեաթերթիկների հաշվման գործընթացին *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 67.2).*

- ☐ Ցուցմունք տվեք հաշվողներին հաշվեն ընտրողների ստորագրությունների թվաքանակը համընդհանուր ընտրացուցակում, հատուկ ցուցակում և շրջիկ քվեատուփի ցուցակում *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 67.3)*

- ☐ Ցուցմունք տվեք հանձնաժողովի քարտուղարին առանձինառանձին դրոշմակնքել ընտրողների սեղանի, հատուկ և շրջիկ քվեատուփերի ցուցակները *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 67.3)*

☐ Ցուցմունք տվեք հաշվողներին առանձինառանձին դրոշմակնքել չօգտագործված և խոտան ընտրական քվեաթերթիկները *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 67.5)*

☐ Դրոշմակնքված փաթեթի վրա գրեք ընտրական տեղամասի անվանումը, համարը, ընտրական փաստաթղթերի տեսակը և ստորագրեք հաշվողների հետ միասին: *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 67.5)*

Քվեատուփի բացում, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության լրացում

☐ Ստուգեք քվեատուփի, ինչպես նաև շրջիկ քվեատուփի, բացառիկ դեպքում ստեղծված ընտրական տեղամասի քվեատուփի (այդպիսինի գոյության դեպքում) դրոշմակնիքի ամբողջականությունը *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 68.1)*

☐ Առաջին հերթին բացեք շրջիկ քվեատուփը (այդպիսինի գոյության դեպքում): Հաշվողները ստուգում են քվեատուփում ստուգողական թերթի գոյությունը և սահմանում են դրա նույնականությունը համեմատելու համար հանձնաժողովում պահված ստուգողական թերթի հետ *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 68.4)*

☐ Բացեք հիմնական քվեատուփը: Հաշվողները ստուգում են քվեատուփում ստուգողական թերթի գոյությունը և դրա իսկականությունը հաստատելու նպատակով համեմատում են հանձնաժողովում համեմատության համար պահված ստուգողական թերթի հետ: *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 68.5)*

☐ Բացեք բացառիկ դեպքում ստեղծված ընտրական տեղամասի քվեատուփը (այդպիսինի գոյության դեպքում): Հաշվողները ստուգում են քվեատու-

փում ստուգողական թերթի գոյությունը և դրա իսկականությունը հաստատելու նպատակով այն համեմատում են հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի հետ:

- Եթե ամեն ինչ կարգին հայտնվի, հաշվողները միմյանց պետք է խառնեն հիմնական, շրջիկ և բացառիկ դեպքում ստեղծված ընտրական տեղամասի քվեատուփից դուրս թափված ծրարները *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 68.5)*

- Յուցմունք տվեք հաշվողներին տեսակավորեն քվեաթերթիկները: Հանձնաժողովի հետ միասին մեկ առ մեկ քվեարկեք կասկածելի համարվող քվեաթերթիկները *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 69.5)*

- Յուցմունք տվեք հաշվողներին հաշվեն անվավեր ընտրական քվեաթերթիկները և յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած ձայները/ընտրական քվեաթերթիկները *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 69.6-9)*

- Քարտուղարի հետ միասին ստուգեք ամփոփիչ արձանագրությունների տվյալների ճշտությունը.

- Յուցմունք տվեք հաշվողներին կապել և դրոշմակնքել. անվավեր ընտրական քվեաթերթիկները (առանձին են դրոշմակնքվում այլ ընտրական տեղամասին պատկանող անվավեր քվեաթերթիկները), ամեն մի ընտրական սուբյեկտի ընտրական քվեաթերթիկները (փաթեթները ստորագրում են հաշվողները և նախագահը) *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 69.6-9)*

- Հանձնաժողովի քարտուղարը, ձեզ հետ համաձայնեցված, լրացնում է ամփոփիչ արձանագրությունը (արձանագրությունը կազմելիս ի նկատի պետք է առնվեն գրանցողների բացատրագրերում (այդպիսինի գոյության դեպքում) մատնանշված տվյալները: Քարտուղարը ամփոփիչ արձանագրությունը գրանցում է Գրանցամատյանում: Հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել ամփոփիչ արձանագրությունը: Լրացված ամփոփիչ արձանագրությունը վկայագրեք հանձնաժողովի կնիքով: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության պատճեն, ուղղումների արձանագրությունը և գրանցողների գրավոր բացատրագրերի հետ միասին (այդպիսինի գոյության դեպքում) անմիջապես ուղարկում են ԿԸՀ *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 71.14)*

- Քարտուղարը պատճենահանում է ամփոփիչ արձանագրությունը: Պատճեն տալու ժամանակ՝ քարտուղարի հետ միասին դուք պետք է ստորագրեք ամփոփիչ արձանագրության պատճենները և վավերացնեք հանձնաժողովի հատուկ կնիքով: Քարտուղարը պետք է տրված պատճենները գրանցում անցկացնի *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 71.8)*

- Առանձին-առանձին փաթեթով դրոշմակնքեք հանձնաժողովի կնիքը (հանձնաժողովի հատուկ կնիքի դրոշմակնքված փաթեթը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները) *(Ընտրական Օրենսգիրք՝ Հոդված 71.13),* գրանցողների կնիքները, Գրառումների գիրքը, Գրանցամատյանը, բողոքները: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը չի դրոշմակնքվում:

- Տեղադրեք դրոշմակնքված ընտրական փաստաթղթերը մեծ արկղում կամ տոպրակում և տարեք տարածքային հանձնաժողով: Քվեատուփից/տոպրակից առանձին տարեք քվեարկո-

ության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, քվեարկության օրվա գրառումների գիրքը,, դիմում/բողոքների և Գրանցամատյանի դրոշմակնքված ծրարը:

Վերստուգեք տվյալները		Գրանցող					Ուղարկեք SMS-ով
		I	II	III	IV	V	
ժամը 10-ին	Տրված քվեաթերթիկներ						Ստորագրությունների գումարը ⇩
	Խոտան քվեաթերթիկներ						
	Ստորագրությունների թվաքանակը						
ժամը 12 -ին	Տրված քվեաթերթիկներ						Ստորագրությունների գումարը ⇩
	Խոտան քվեաթերթիկներ						
	Ստորագրությունների թվաքանակը						
ժամը 15-ին	Տրված քվեաթերթիկներ						Ստորագրությունների գումարը ⇩
	Խոտան քվեաթերթիկներ						
	Ստորագրությունների թվաքանակը						
ժամը 17-ին	Տրված քվեաթերթիկներ						Ստորագրությունների գումարը ⇩
	Խոտան քվեաթերթիկներ						
	Ստորագրությունների թվաքանակը						
ժամը 19-ին	Տրված քվեաթերթիկներ						Ստորագրությունների գումարը ⇩
	Խոտան քվեաթերթիկներ						
	Ստորագրությունների թվաքանակը						
վերջնական (ժամը 20-ին	Տրված քվեաթերթիկներ						Ստորագրությունների գումարը ⇩
	Խոտան քվեաթերթիկներ						
	Ստորագրությունների թվաքանակը						

Ուշադրություն.

- Վերստուգեք տվյալների ճշգրտությունը հետևյալ բանաձևով. Տրված քվեաթերթիկների թվաքանակից - խոտան քվեաթերթիկների թվաքանակը = ընտրողների ստորագրությունների թվաքանակին:
- Յուրաքանչյուր գրանցողից ստացած ստորագրությունները ժամը 10, 12, 15, 17, 19, 20 -ին գումարեք և տվյալը կարճ տեքստային հաղորդա-գրությամբ (sms-ով) **անհապաղ** ուղարկեք Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից մատուցված համարին: